Հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«16» փետրվարի 2023թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Տիգրան Արմանի Մուղնեցյանի **«Ընտրությունների ինստիտուտի կայացման առանձնահատկությունները ժողովրդավարացման գործընթացներում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատվել է

Հայ-Ռուսական համալսարանի «Քաղաքագիտություն» ամբիոնի 2023թ փետրվարի 16-ի նիստում: Նիստում մասնակցում էին քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Փ. Ենգոյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանը, քաղ. գիտ. թեկնածու Ն.Ա. Դունամալյանը, քաղ. գիտ. թեկնածու Ս.Ս. Շիրխանյանը, ավագ դասախոս Մ.Լ. Հարությունյանը, դասախոսներ Ն.Ի.Մարգարյանը, Ի.Ա. Քարամյանը:

Տիգրան Մուղնեցյանի «Ընտրությունների ինստիտուտի կայացման առանձնահատկությունները ժողովրդավարացման գործընթացներում» թեմայով ատենախոսությունն արդիական և գիտագործնական նշանակություն ունեցող հետազոտություն է: Աշխատանքի արդիականությունը նախնառաջ պայմանավորված է ընտրությունների ինստիտուտի և ընտրական տվյալների մշտապես փոփոխվող և թարմացվող բնույթով: Աշխատանքը արդիական է նաև այն հանգամանքով, որ առանձին հետազոտվում են չորս հետխորհրդային անցումային երկրկների՝ Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի և Մոլդովայի ընտրական համակարգերը և համեմատական վերլուծություն է կատարվում վերոնշյալ երկրների ընտրական համակարգերի միջև: Ուրվագծվում է ընտրական համակարգերի զարգացման դինամիկան, զուգահեռ ներկայացվում է քաղաքական և ինստիտուցիոնալ միջավայրը, որում գործում են համապատասխան ընտրական համակարգերը:

Բացի այդ, աշխատանքում ընտրական գործընթացների և տվյալների համադրությամբ քանակակական մեթոդներով դուրս են բերված չորս երկրների կուսակցությունների արդյունավետ թիվը և անհամամասնականության ցուցանիշը: Քանակական վերլուծության միջոցով և ընտրական տվյալների օգտագործմամբ վերոնշյալ ցուցանիշների հաշվարկով, ինչպես նաև համեմատական վերլուծության իրականացմամբ, չորս ժողովրդավարական անցման փուլում գտնվող հետխորհրդային երկրների ընտրական համակարգերի էական հատկանիշների բացահայտմամբ ամփոփվում է հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսության նպատակն է հետխորհրդային ժողովրդավարական անցման փուլում գտնվող երկրների ընտրական համակարգերի համեմատությունը: Հեղինակը աշխատանքում հաջողությամբ համադրում և կիրառում է քանակական և որակական մեթոդներ՝ օգտագործելով փաստաթղթերի ու զեկույցների կոնտենտ վերլուծության մեթոդը, քաղաքական գործընթացների ուսումնասիրման համար դիսկուրս և իրադարձային վերլուծության մեթոդները: Ուսումնասիրվող երկրների ընտրական

համակարգերի համեմատության համար հեղինակն օգտագործում է ոչ միայն որակական մեթոդներ, այլև նկարագրողական վիճակագրության մեթոդը՝ դուրս բերելով ընտրական համակարգի հատկանիշների ամբողջական թվային ցուցանիշները և այդ ցուցանիշների ստանդարտից շեղումը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ ինը ենթագլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի առաջին «Ուսումնասիրության տեսամեթոդական հիմքերը» գլխում հեղինակը ներկայացնում գրականությունում առկա ժողովրդավարությանը, ժողովրդավարական անցմանը, ընտրական համակարգերին վերաբերվող հիմնական մոտեցումներն ու հայեցակարգերը: Գլխում հստակ ամփոփված է թեմային առնչվող քաղաքագիտական մտքում առկա տեսական հիմնական դրույթները:

Ուսումնասիրության երկրորդ՝ «Հետխորհրդային ժողովրդավարցվող երկրներում ընտրական համակարգի համեմատական վերլուծություն» գլխում հեղինակը սահմանում է ուսումնասիրվող երկրների ընտրության չափանիշների շրջանակը, առանձին անդրադարձ է կատարվում ընտրված չորս երկրների ընտրական համակարգերին՝ ընդգծվում են դրանց բաղադրիչներն ու նրանց կառուցվածքը: Ամեն ընտրական փուլի համար ըստ երկրների հաշվարկվում է անհամամասնականության և խորհրդարանական կուսակցությունների արդյունավետ թվի ցուցանիշները: Ինչպես նաև արդեն հաշվարկված և ուսումնասիրված տվյալների բազայի հիման վրա կատարվում է համեմատական վերլուծությունը՝ դուրս են բերվում ընդհանրություններն ու առանձնահատկությունները:

Ատենախոսության հեղինակ Տ. Մուղնեցյանը համակողմանիորեն վերլուծության է ենթարկել հետազոտության գիտական նորույթով պայմանավորված խնդիրները: Ատենախոսության եզրակացություններ բաժնում ամբողջությամբ արտացոլված են ատենախոսական աշխատանքում սահմանված խնդրի լուծումները:

Սեղմագիրը համապատասխանում է թեկնածուական ատենախոսության բովանդակությանը՝ լինելով դրա դրույթների համառոտ արտացոլումը:

Հեղինակի հրատարակած հոդվածներն ու աշխատություններն արտացոլում են թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն գիտագործնական նշանակություն: Աշխատանքում առաջ քաշված եզրահանգումները կարող են օգտագործվել ոլորտային քաղաքականության մշակման և իրավաստեղծ գործընթացի համար, հարստացնելով հանրային քաղաքականության մշակման տվյալային բազան և փաստահեն բնույթը:

Աշխատությունը զերծ չէ նաև որոշակի թերություններից.

1. Այն ինչ ատենախոսը ձևակերպում է իբրև հետազոտության օբյեկտ նույնական է ատենախոսության վերնագրի հետ: Իրականում, աշխատանքի վերնագիրը պետք է համապատասխանի հետազոտության առարկայի ձևակերպման հետ: Այսինքն հետազոտության անվանումը պետք է կոնկրետացվեր՝ նշելով, թե որ տեսանկյունից կամ որ համատեքստում է ուսումնասիրվում օբյեկտը: Հետազոտողը իրականում ուսումնասիրում է «անցման պայմաններում գտնվող հետխորհրդային երկրների ընտրական համակարգերը», ինչը անվանման մեջ արտացոլված չէ:
2. Հեղինակը սկզբից ձևակերպում է հետազոտության նպատակը և խնդիրները, իսկ հետո միայն հետազոտության օբյեկտը և առարկան: Իրականում գիտական հետազոտության տրամաբանությունը պահանջում է հակառակը՝ նախ՝ ձևակերպել օբյեկտն և առարկան, իսկ հետո՝ նպատակը:
3. Ատենախոսը ձևակերպում է ընդհամենը երեք հետազոտական խնդիր, սակայն այդ խնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ ամեն մի կետը մի շարք խնդիրներ է պարունակում: Անհրաժեշտ էր դրանք ձևակերպել առանձին: Նշենք նաև, որ առաջին գլխի բովանդակությունը գրեթե արտացոլված չէ ձևակերպված խնդիրների մեջ:

4. Ձևակերպելով գիտական նորույթը ատենախոսը փաստորեն հերթական անգամ նկարագրում է կատարված աշխատանքը: Անհրաժեշտ էր հստակ, կոնկրետ կետերով նշել, թե որն է այդ կատարված աշխատանքի նորույթը:
5. Հետազոտողը մանրամասն ներկայացնում է հետազոտության թեմայի մշակվածությունը, սակայն գրեթե չի անդրադառնում հետխորհրդային երկրների գիտնականներին: Սա արտացոլված է նաև գրականության ցանկի մեջ, որտեղ հետխորհրդային տարածքի հեղինակները գրեթե բացակայում են: Մինչդեռ ատենախոսը ուսումնասիրում է հենց հետխորհրդային փորձը և նա պարտավոր էր, թեկուզև քննադատական ձևով, անդրադառնալ նաև հետխորհրդային տարածքում առկա վիթխարի ռուսալեզու գրականությանը: Նշենք նաև, որ, քանի որ աշխատանքը հայերեն է, ավելի կորեկտ կլիներ գրականության ցանկում նախ ներկայացնել բնօրինակի, այսինքն՝ հայալեզու, իսկ հետո միայն՝ օտարալեզու գրականությունը:
6. Ակնհայտ է, որ ատենախոսության բովանդակության բաժանման մեջ առկա է անհամամասնություն. առաջին գլուխը ներառում է 3 ենթագլուխ (46 էջ), իսկ երկրորդը՝ 6 ենթագլուխ (93 էջ): Այդ պատճառով ցանկալի կլիներ վերանայել աշխատության կառուցվածքը և բալանսավորել ներկայացվող նյութը: Նշենք նաև այն հանգամանքը, որ երկրորդ գլխի «Հետազոտության կոնցեպտուալ շրջանակը» առաջին ենթագլուխը նպատակահարմար կլիներ ներառել առաջին գլխում, քանի որ ըստ գիտական հետազոտության տրամաբանության տեսամեթոդաբանական շրջանակը պետք է սահմանվի աշխատության սկզբնական մասում:
7. Աշխատության եզրակացության մեջ առկա են մի շարք տրիվիալ պնդումներ, ինչից կարելի էր խուսափել: Օրինակ՝ «հետխորհրդային անցումային ռեժիմներում ընտրությունները, դրանց շուրջ ծավալվող գործընթացները ժողովրդավարացման կարևոր աղբյուրներ են» (էջ 150):

ՀՌՀ քաղաքագիտության ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է որ, այս թերությունները չեն զցում ատենախոսության գիտական արժեքը և Տիգրան

Արմանի Մուղնեցյանի «Ընտրությունների ինստիտուտի կայացման առանձնահատկությունները ժողովրդավարացման գործընթացներում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԻԳ.00.02, Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության, իսկ ատենախոսը հաջող պաշտպանության դեպքում արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Քաղաքագիտության ամբիոնի վարիչ

փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ /Հ. Լ. Սարգսյան/

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանի

ստորագրությունը հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական քարտուղար

Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Կասաբաբովա